ժամանակի պակասելոյ նորայ թէ 'ի պատճառս մահուան և կամ թէ 'ի պատճառս որոք մեղաց անկման առաջի սերունդն նորայ մտցէ պաշտօն 'ի տեղի նախնոյն իւրոյ մինչև յաւիտեան։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Եթէ գուցէ զի նախարարութիւնն Հայաստանեաց լինիցի ժառանգութեան, պարտ է լինիլ որդոց որդիս, ըստ սահմանի ցեղաբանութեան մարդոյ, եթէ արու և եթէ էգ, բայց 'ի խելագարէ։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Եթէ գուցէ զի նախարարութիւնն հայաստանեաց լինիցի ժառանգաւոր, յայնժամ բարձցի զօրութիւնն խորհրդակցաց 'ի ծածուկ խորհրդարանի ժամանակն, զամենայն աւուրս կենաց նոցայ, և տացցի զօրութիւն նոցայ միմիայն երիս ամ ժամանակօք, և 'ի լրմանէ ժամանակին, և կամ 'ի պատճառէ մահուան և մեղաց պակասելոյն 'ի տեղի նորայ ընտրեսցի այլոք 'ի տանէն հայոց, և հաստատեսցի նամակօք երիս ամ ժամանակաւ։

ԳԼՈՒԽ ԾԵ.

'Ի որում աւուր որ պատուեսցի ոմն նախարարութեան նամակօք 'ի տանէն հայոց ժա